Որ ետ ինձ կար տկար անձին. ու զԳիմ ու զՆուն հասոյց ի մին.
Բամեալ զբոլոր որ ի միջին, Գիմն առաջին և Նուն յետին.
Ինձ երանի հազար ընդ նմին, որ և տեսի զաւարտ սորին.
Էն է գիտակ Տէրն ամենին, որ այն գրիչն է առաջին.
Որ Բէնն Եհան Աբրահամին. Էհաս աւարտն որ գրեալ էին.
Քառասուն և երկու աւրն ամենի. տառս գրեցաւ Աստուածային»:

Աւետարանիս վերջը ընդարձակ մի յիշատակարան կայ, զոր ժամանակ չեմ ունեցած օրինակել, այդ յիշատակարանին մէջ «Պ'ծ'Ա» թուական մի կայ.

Կողերը արծաթապատ, արծաթի վերայ խաչեր և խաչերու վերայ Քրիստոս փորագրուած է:

2. ԻՐԻՑՈՒ ԳԵՂ:

Ղայաբէկից 1/4 ժամ յարևելս Գարա-Քիլիսէի ճանապարհին վերայ Իրիցու գիւղն է 35 տուն հայ կաթոլիկ բնակիչով: Գիւղս Քարձորից 1/4 ժամ արևմտեան հիւսիս նոյն չափ մի ևս բլուրից հիւսիս է: Ցեղացիք Ջաջուռայ Իրիցու գիւղից ոլոշելու համար Ֆրանկ կամ Սև Իրիցու գիւղ կասեն:

3. ՔԱՐՁՈՐ ԵՒ ԱՇԼԻՍ ՁԱՔԻ:

Գիւղս Խժիկ—Դաւոյի բարձրաւանդակին արևմտեան հիւս. կողմն է, Ամատ գետի ձախ ափին վերայ հաստատուած մի քուրդ գիւղ է 25 տուն բնակչօք:

Թ. Գալէից ի Գարա-Քիլիսէ գնալիք ճանապարհին վերայ, այս երկու տեղւոյ միջավայրն՝ Առաջինից 3 ժամ արևելեան հարաւ, երկրորդից 2 ժամ արևմտեան հիւսիս, նաև Բլուր գիւղէ 1 ժամ արևելեան հիւսիս, նոյնչափ մը ևս Իրիցու գիւղի արևելեան հարաւ: